ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1060Ա

06 փետրվարի 2025թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ 2-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Ռուզաննա Խաչիկի Պողոսյանի լիազորված անձ՝ Նորայր Սարգսի Օհանյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Յուրա Խաչիկի Եղիազարյանի կողմից 27.01.2025թ. կնքված թիվ 359 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04022XBBDBZQ/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, գյուղ Ոսկեհատ 10-րդ փողոց թիվ 26 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 107-Ա

«10» փետրվարի 2025թ. ք. Էջմիածին

## ԱՍՅԱ ԱԲԳԱՐԻ ՇԱՀԲԱԶՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏՐՈՆԱԺ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-36-րդ և 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 02-ի N 631–Ն որոշմամբ, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վ. Տերյան փողոցի 12 տուն հասցեի բնակիչ Անդրանիկ Ռոբերտի Սարգսյանի 24.01.2025թ.-ի դիմումը, Վաղարշապատ համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 07.02.2025թ. թիվ 02 նիստի արձանագրությունը, ուսումնասիրություններն ու փաստերը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վ. Տերյան փողոցի 12 տուն հասցեի բնակիչ Ասյա Աբգարի Շահբազյանի /ծնված՝ 20.01.1938թ., անձնագիր՝ AV 0343018/ նկատմամբ սահմանել պատրոնաժ՝ պատրոն նշանակելով իր թոռնիկին՝ Անդրանիկ Ռոբերտի Սարգսյանին /ծնված՝ 11.02.1991թ., անձնագիր՝ AU 0491146/:
2. Հսկողություն սահմանել Ասյա Աբգարի Շահբազյանի նկատմամբ պատրոն նշանակված Անդրանիկ Ռոբերտի Սարգսյանի գործունեության նկատմամբ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1084ա

10 փետրվարի 2025թ. ք. Էջմիածին

**ԷՋՄԻԱԾՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ 18.03.1993Թ. ԹԻՎ 4 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33րդ և 34-րդ հոդվածների, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և 27.1 կետերի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Պուշկինի փողոցի թիվ 5/1 տան բնակիչ Պետրոս Երվանդի Օրդակյանի դիմումը, Արաքսի Հարությունի Օրդակյանի մահվան վկայականը, ծննդյան վկայականը և ամուսնության վկայականը:

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Էջմիածնի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 18.03.1993թ. թիվ 4 արձանագրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը. <<Օրդակյան Արաքսիա>> բառերի փոխարեն կարդալ <<Օրդակյան Արաքսի>> բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Թ Ի Վ 109Ա

10 փետրվարի 2025թ.

ք. Էջմիածին

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին » 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 731-Ն և 912-Ն որոշումների պահանջներով, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2023HLFRYY և «Արսեն Մելքոնյան Արթուրի» ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 0496/ կողմից 02.12.2024թ. կազմված հատակագիծը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արարատյան փողոցում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.01853հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված ընդհանուր 47.6քմ / 47.6քմ արտաքին և 42.64քմ ներքին / մակերեսով բնակելի նշանակության օժանդակ շինությունները համարել Վաղարշապատ համայնքի սեփականություն: Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, դրա զբաղեցրած հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերին:
2. Օրինականացնել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արարատյան փողոցում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.01853հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 47.6քմ / 47.6քմ արտաքին և 42.64քմ ներքին / մակերեսով բնակելի նշանակության օժանդակ շինությունները:
3. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արարատյան փողոցում գտնվող ընդհանուր 47.6քմ / 47.6քմ արտաքին և 42.64քմ ներքին / մակերեսով բնակելի նշանակության օժանդակ շինությունները և դրանց պահպանման և սպասարկման համար 0.01853հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը առաջարկել գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել կառույցն իրականացնող անձին՝ Մանուկ Աշոտի Մելքոնյանին :
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1104

10 փետրվարի 2025թ. ք. Էջմիածին

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Արսեն Մելքոնյան Արթուրի» ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 0496/ կողմից 02.12.2024թ. կազմված հատակագիծը և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04011JTMTNTL.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի սեփականություն հանդիսացող Էջմիածին քաղաքի Արարատյան փողոցում գտնվող բնակելի նշանակության օժանդակ շինություններին և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.01853հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին Արարատյան փողոց, թիվ 42/3:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ МЭРИЯ ВАГАРШАПАТА
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
04443077

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 111-Ա

10 փետրվարի 2025թ. ք. Էջմիածին

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 26.12.2024թ. կազմված հատակագիծը և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 040119UFVSVW.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի սեփականություն հանդիսացող Էջմիածին քաղաքի Զորավար Անդրանիկի 1-ին թաղամասում գտնվող 0.017հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, քաղաք Էջմիածին Զորավար Անդրանիկի 1-ին թաղամաս, թիվ 23/1:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1124

10 փետրվարի 2025թ. ք. Էջմիածին

### ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԽԱՉԻԿ ՌԱՖԻԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ղ. Ղուկասյան փողոցի թիվ 4 տան բնակիչ՝ Խաչիկ Ռաֆիկի Մանուկյանի դիմումը պարզվել է, որ.

- համաձայն «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 18.09.2024թ. հաստատված 7810, 7811 սեղանամատյանով գրանցված ըստ կտակի և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերի և «Ավագ Ավագյան Գագիկի» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 18.12.2024թ. կազմված հատակագծի, Վաղարշապատ համայնքի, Էջմիածին քաղաքի Ղ. Ղուկասյան փողոցի թիվ 4ա հասցեում գտնվող բնակելի տունը պատկանում է Խաչիկ Ռաֆիկի Մանուկյանին.
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 0.0439 հա, որի վրա կառուցված է բնակելի տուն և օժանդակ շինություններ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 0.0148հա սահմանազատված հողամաս,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ. մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի, Էջմիածին քաղաքի Ղ. Ղուկասյան փողոցի թիվ 4ա հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը, օժանդակ շինությունները և ավել օգտագործվող 0.0148 հա մակերեսով հողամասը համարել Խաչիկ Ռաֆիկի Մանուկյանի / ծնված՝ 19.06.1959թ./ սեփականությունը:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 113Ա

10 փետրվարի 2025թ. ք.Էջմիածին

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ 2-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ղ. Ղուկասյան փողոցի թիվ 4 տան բնակիչ՝ Խաչիկ Ռաֆիկի Մանուկյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ղ. Ղուկասյան փողոցի թիվ 4ա հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 18.09.2024թ. հաստատված 7810, 7811 սեղանամատյանով գրանցված ըստ կտակի և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011Z87N352/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին Ղ. Ղուկասյան փողոց թիվ 4/1 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Թ Ի Վ 1141Ա

10 դեկտեմբերի 2025թ.                                                                                ք. Էջմիածին

## ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԱՌԿԱ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԵՅՐԱՆ ՄԵԼՔՈՆԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Րաֆֆու /նախկին Մռավյան/ փողոցի թիվ 38 տան բնակիչ՝ Սեյրան Մելքոնի Մելքոնյանի դիմումը՝ պարզվեց, որ համաձայն «Աիդա Բաղրամյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0393/ կողմից 11.11.2024թ. կազմված հատակագիծ, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011LFVXLJS/, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Րաֆֆու /նախկին Մռավյան/ փողոցի թիվ 38 հասցեում գտնվող 0.0366հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա Սեյրան Մելքոնի Մելքոնյանի կողմից որպես սեփականություն տիրապետվող բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շինությունների նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված հողհատկացման և քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ պահանջներով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Րաֆֆու /նախկին Մռավյան/ փողոցի թիվ 38 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը, բնակելի նշանակության օժանդակ շինությունները և 0.0366հա մակերեսով հողամասը համարել Սեյրան Մելքոնի Մելքոնյանի /ծնված՝ 01.01.1957թ./ սեփականությունը:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ                                                    Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 115Ա

10 սեպտեմբերի 2025թ. ք.էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ 2-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Րաֆֆու /նախկին Մռավյան/ փողոցի թիվ 38 տան բնակիչ՝ Սեյրան Մելքոնի Մելքոնյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Րաֆֆու /նախկին Մռավյան/ փողոցի թիվ 38 հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011LFVXLJS/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին Րաֆֆու փողոց թիվ 38 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1166Ա

10 փետրվարի 2025թ. ք. Էջմիածին

### ՀԱԿՈԲ ԱԶԱՏԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՀԱՆԳՍՏԻ ՄԵՆՅԱԿԸ ԵՎ ՊԱՐԻՍՊԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցի 3-րդ փակուղու թիվ 55/1 տան բնակիչ Հակոբ Ազատի Մուրադյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան սեփականության իրավունքով իրեն պատկանող /հիմք՝ 07.08.2023թ. տրված թիվ 07082023-04-0001 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական, «Ավագ Ավագյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 31.10.2023թ. կազմված հատակագիծ / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի վարչական տարածքում գտնվող 0.394հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողից 0.1հա մակերեսով մասի նպատակային նշանակությունը բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, փոփոխելու և ինքնակամ կառուցված շինությունները օրինականացնելու խնդրանքով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 7-րդ հոդվածի 8-րդ մասի, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշման, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 20.12.2024թ. թիվ 104-Ա որոշումը և ՀՀ վարչապետի 22.12.2009թ. թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի կողմից 03.12.2024թ. տրված թիվ 2/փ-483 դրական եզրակացությունը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի վարչական տարածքում գտնվող 0.394հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողից 0.1հա մակերեսով մասի նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:
2. Համաձայն տարածագնահատման գոտիականության հողամասը գտնվում է 11-րդ գոտում և կադաստրային արժեքը մեկ քառակուսի մետրի համար կազմում է 4441.8 /չորս հազար չորս հարյուր քառասունմեկ ամբողջ ութ/ ՀՀ դրամ, փոփոխման պահին հողամասի կադաստրային արժեքների տարբերությունը մեկ քառակուսի մետրի համար 4 137.3 /չորս հազար հարյուր երեսունյոթ ամբողջ երեք/ ՀՀ դրամ է և 0.1հա համար կազմում է 4 137 300 / չորս միլիոն հարյուր երեսունյոթ հազար երեք հարյուր / ՀՀ դրամ, որը պետք է վճարել համայնքային բյուջե՝ 900325151166 հաշվեհամարին:
3. Ինքնակամ կառուցված ընդհանուր 78.9քմ / 78.9քմ արտաքին, ներքին 62.7քմ / մակերեսով շինությունները ճանաչել օրինական, որի համար սահմանված 155 355 / հարյուր հիսունհինգ հազար երեք հարյուր հիսունհինգ / ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60 օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
4. Հետագա կառուցապատումն իրականացնել ՀՀ քաղաքաշինության բնագավառի օրենսդրության պահանջներին համապատասխան, նախապես համաձայնեցված և հաստատված նախագծային փաստաթղթերի հիման վրա Վաղարշապատ համայնքի ղեկավարի կողմից տրված շինարարության թույլտվության համաձայն:
5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
6 .Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ     ԹԻՎ 1174-Ա

10 փետրվարի 2025թ.                                                                                    ք.Էջմիածին

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ 2-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցի 3-րդ փակուղու թիվ 55/1 տան բնակիչ՝ Հակոբ Ազատի Մուրադյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի 04-002-0156-0003 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին /հիմք՝ 07.08.2023թ. տրված թիվ 07082023-04-0001 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011WUDKPFE/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին թիվ 10 շինություն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝                                        Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 118Ա

10 փետրվարի 2025թ. ք. Էջմիածին

### ՇՈՒՇԱՆ ՍՈՒՐԵՆԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 71 շենքի թիվ 28 բնակարանի բնակիչ Շուշան Սուրենի Կիրակոսյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան սեփականության իրավունքով իրեն պատկանող /հիմք՝ 12.10.2023թ. տրված թիվ 12102023-04-0035, 12102023-04-0047 և 12102023-04-0109 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011AMLF4QG / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի վարչական տարածքում գտնվող 04-002-0311-0011, 04-002-0311-0023 և 04-002-0311-0024 կադաստրային ծածկագրերով 0.5հա, 0.4հա և 0.5հա ընդհանուր՝ 1.4հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, փոփոխելու խնդրանքով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 7-րդ հոդվածի 8-րդ մասի, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշման, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 20.12.2024թ. թիվ 106-Ա որոշումը և ՀՀ վարչապետի 22.12.2009թ. թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի կողմից 04.12.2024թ. տրված թիվ 2/փ-490 դրական եզրակացությունը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի վարչական տարածքում գտնվող 04-002-0311-0011, 04-002-0311-0023 և 04-002-0311-0024 կադաստրային ծածկագրերով համապատասխանաբար 0.5հա, 0.4հա և 0.5հա ընդհանուր՝ 1.4հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը՝ նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:

2.Համաձայն տարածագնահատման գոտիականության հողամասը գտնվում է 12-րդ գոտում և կադաստրային արժեքը մեկ քառակուսի մետրի համար կազմում է 2887.5 /երկու հազար ութ հարյուր ութսունյոթ ամբողջ հինգ/ ՀՀ դրամ, փոփոխման պահին հողամասի կադաստրային արժեքների տարբերությունը մեկ քառակուսի մետրի համար 2 583 /երկու հազար հինգ հարյուր ութսուներեք / ՀՀ դրամ է և 1.4հա համար կազմում է 36 162 000 / երեսունվեց միլիոն հարյուր վաթսուներկու հազար / ՀՀ դրամ, որը պետք է վճարել համայնքային բյուջե՝ 900325151166 հաշվեհամարին:

3.Հետագա կառուցապատումն իրականացնել ՀՀ քաղաքաշինության բնագավառի օրենսդրության պահանջներին համապատասխան, նախապես համաձայնեցված և հաստատված նախագծային փաստաթղթերի հիման վրա Վաղարշապատ համայնքի ղեկավարի կողմից տրված շինարարության թույլտվության համաձայն:

4.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1190-Ա

10 փետրվարի 2025թ. ք.Էջմիածին

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ. Մաշտոցի փողոցի թիվ 71 շենքի թիվ 28 բնակարանի բնակիչ՝ Շուշան Սուրենի Կիրակոսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի,04-002-0311-0011, 04-002-0311-0023 և 04-002-0311-0024 կադաստրային ծածկագրով անշարժ գույքերը /հիմք՝անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ թիվ 12102023-04-0109 տրված՝ 12.10.2023թ., թիվ 12102023-04-0035 տրված՝ 12.10.2023թ.,թիվ 12102023-04-0047 տրված՝ 12.10.2023թ., և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011AMLF4QG/ միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Էջմիածին - Ոսկեհատ խճուղի թիվ 10/1 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ .ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 180Ա

10 փետրվարի 2025թ. ք. Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 27.12.2024Թ. ԹԻՎ 2116Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարի 27.12.2024թ. թիվ 2116Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը

հիմնական մասում նշված «06.12.2024թ. կազմված հատակագիծ» բառերի փոխարեն կարդալ «04.02.2025թ. կազմված հատակագիծ» բառերը.

հիմնական և եզրափակիչ մասերում նշված «0.0368հա» բառերի փոխարեն կարդալ «0.0363հա» բառերը.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1214

10 հոկտեմբերի 2025թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Մարշալ Բաղրամյան փողոցի թիվ 22 շենքի թիվ 28 բնակարանի բնակիչ՝ Անդրանիկ Աշոտի Մանուկյանի դիմումը՝ իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 20122024-04-0018 տրված՝ 20.12.2024թ., «Ավագ Ավագյան Գագիկի» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 22.01.2025թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 040118T2TFAB, 040117CKYYSG/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե. Չարենցի 1-ին թաղամասի թիվ 98 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Ե. Չարենցի 1-ին թաղամաս թիվ 98 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Ե. Չարենցի 1-ին թաղամաս թիվ 98/1 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 122Ա

10 փետրվարի 2025թ. ք. Էջմիածին

**ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ 12.11.2009Թ. ՏՐՎԱԾ ՔԱՂՎԱԾՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և 27.1-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Երևան քաղաքի Քանաքեռ Զեյթուն վարչական շրջանի Զաքարիա Քանաքեռցու փողոցի թիվ 106/ 1բ շենքի թիվ 29 բնակարանի բնակիչ՝ Գոհար Արտյուշի Նալբանդյանի դիմումը, Անահիտ Արշակի Կարակաշյանի մահվան վկայականը, Ռաֆիկ Սուրենի Կարակաշյանի անձնագիրը, Լեյլա Սուրենի Մուշեղյանի անձնագիրը և ամուսնության վկայականը և Գուլնարա Սուրենի Կարակաշյանի մահվան վկայականը.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Էջմիածնի քաղաքապետի կողմից 12.11.2009թ. տրված քաղվածքում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները. <<Կարակաշյան Անահիտ 1931>> բառերի փոխարեն կարդալ <<Կարակաշյան Անահիտ Արշակի 22.03.1931թ.>> բառերը, <<Կարակաշյան Ռաֆիկ 1961>> բառերի փոխարեն կարդալ <<Կարակաշյան Ռաֆիկ Սուրենի 14.03.1961թ.>> բառերը, <<Կարակաշյան Լեյլա>> բառերի փոխարեն կարդալ <<Մուշեղյան Լեյլա Սուրենի 08.01.1952թ.>> բառերը <<Կարակաշյան Գյուլնարա 1956>> բառերի փոխարեն կարդալ <<Կարակաշյան Գուլնարա Սուրենի 15.06.1956թ.>> բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ